Հանդիպման ընթացքում խոսվեց հայ-ուկրաինական հարաբերությունների եւ մշակութային կապերի զարգացման մասին, ինչպես նաեւ Ուկրաինայի հայ համայնքի եւ նրա կարեւոր դերակատարության մասին երկրի կյանքի տարբեր ոլորտներում: Անդրադարձ կատարվեց նաեւ երկու երկրների հոգեւոր կյանքին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ-ՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Նոյեմբերի 22-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Անրի Ռենոյին:

Նորին Սրբությունն անդրադարձավ այն կարեւոր ծառայությանը, որ դեսպանատունը կատարում է երկու բարեկամ երկրների հարաբերությունների սերտացման, զորացման եւ հետագա զարգացման համար: Հայոց Հայրապետը երախտագիտությամբ խոսեց նաեւ հայ ժողովրդի հանդեպ Ֆրանսիայի առանձնահատուկ վերաբերմունքի մասին՝ ի մասնավորի անդրադառնալով Ֆրանսիայի վճռական կեցվածքին Հայոց Ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման հարցում:

Իր հերթին պրն. Ռենոն նշեց, որ Հայոց Եկեղեցին հայ ժողովրդի ինքնության հզոր տարրերից մեկն է, որի զորեղ ուժով եւ դարավոր մաքառումների գնով է պայմանավորված հայ ազգի գոյությունը:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ Եկեղեցու առջեւ ծառացած ներկայիս մարտահրավերներին եւ դրանց հաղթահարման ուղիներին, Ֆրանսիայի հայոց թեմին եւ հայ համայնքի կյանքին:

Զրույցի ավարտին Վեհափառ Հայրապետը դեսպանին մաղթեց բարի առաքելություն Հայաստանում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## «ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿԻՆ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ԵՒ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԱՑԻԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Նոյեմբերի 24-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Բարի գալուստ Հայաստան» կին դիվանագետների եւ դիվանագետների կանանց ընկերակցության անդամներին՝ գլխավորությամբ ընկերակցության նախագահ տիկ. Նատալիա Նալբանդյանի:

Ողջունելով հյուրերին՝ Նորին Սրբությունը գնահատանքով անդրադարձավ այն կարեւոր ծառայությանը, որ ընկերակցության անդամներն իրականացնում են ժողովուրդների միջեւ հարաբերությունների սերտացման, բարեկամական կապերի ամրապնդման գործում, բարեգործական տարբեր ձեռնարկներում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը դիվանագետների կանանց ներկայացրեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի խորհուրդը հայ ժողովրդի կյանքում, տեղեկացրեց Մայր Աթոռի կողմից իրականացվող գործունեության մասին, անդրադարձավ խոնարհված եկեղեցիների վերականգնմանը եւ նոր եկեղեցիների կառուցմանը, ժողովրդի քրիստոնեական դաստիարակության ծրագրերին, նոր հոգեւորականների պատրաստությանը, ինչպես նաեւ Հայ Եկեղեցու հովանու ներքո գործող տարբեր ընկերային ծառայություններին:

Ներկաներին հնարավորություն ընձեռվեց հարցեր ուղղել Նորին Սրբությանը, որոնք վերաբերում էին հիմնականում Հայ Եկեղեցու միջեկեղեցական եւ միջկրոնական հարաբերություններին, տարբեր երկրներում գտնվող հայ համայնքներին:

Հանդիպման վերջում տիկին Նալբանդյանը ընկերակցության անդամների անունից Նորին Սրբությանը երախտագիտություն հայտնեց ջերմ ընդունելության համար: Ապա խումբն այցելեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարաններ, ծանոթացավ Հայ Եկեղեցու նվիրական սրբություններին եւ հոգեւոր արժեքներին:

Մայր Տաճար այցելությունից հետո ընկերակցության անդամներն այցելեցին Էջմիածնի հայորդյաց տուն, որտեղ նրանց ողջունեց Մայր Աթոռի եւ ՀԲԸՄ հովանու ներքո գործող հայորդյաց տների հոգեւոր տեսուչ Տ. Կոմիտաս վարդապետ Հովնանյանը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ խմբի անդամները ծանոթացան Հայորդյաց տան սաների աշխատանքներին, ապա ներկա գտնվեցին երեխաների ներկայացրած համերգին: Վերջում սաներն իրենց աշխատանքներից ընծայեցին դիվանագետների կանանց:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«Բարի գալուստ Վայոց ձոր» ասոցիացիայի անդամները վիրտուալ ուղևորության ընթացքում